ՀԱՎԵԼՎԱԾ
ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013Թ,ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ

Գառնի համայնքի ավագանու 2012թ, դեկտեմբերի 25-ի թիվ 30-ն որոշման հավելվածի լրացված տարբերակը Նոր խմբագրությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1. Համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

ա) Մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 դրամ
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բ.ա) 201-ից մինևչ 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ
բ.բ) 501-ից մինչև 1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ
բ.գ) 1001-ից մինչև 3000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ :
բ.դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 100000 դրամ:
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ
դ) 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման, վերականգնման արդիականացման, աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության՝ 3000 դրամ
բ) նախատեսված է միայն կցակառույցների վերակառույցների շենքի գաբարիտային չափերի ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում, շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2500 դրամ

5. Համայնքի տարածքում

ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100դրամ՝մեկ քառակուսի մետրի համար:

բ) հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկներ, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ.

գ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000

6. « Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլատվության յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ
7. Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24 ^{00}-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝

ա) առևտրի օբյեկտի համար 25000 դրամ

բ) հանրային սննդի զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ

գ) բաղնիքների, սաունաների համար 200000 դրամ

դ) խաղատներ կազմակերպման համար 500000 դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար 250000 դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ-ի տեղական տուրքը սահմանվում է

ա) ալկոհոլային սպիրտային պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսարտադրանք գովազդվող արտաքին գովազդի համար 1000 դրամ
բ) թունդ ալկահոլային արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ ամնական
գ) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ ամսական

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիակ տարվա համար սահմանվում է 1000 դրամ
   Գառնիի համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000-100000
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայության իրականացնելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է 10000 դրամ
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու և այլ մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ
12. Համայնքի տարածքում տեղական վճարների դրույքաչափ սահմանել՝

ա) Գյուղական համայնքի տնօրինության և օգտագործամն տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ծառայությունների դիամց փոխհատուցման վճար սահմանել 20000 դրամ
բ) մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կատարված ծախսերի դիմաց փոխհատուցվում է անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափը:

13. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիամց վճարումների դրույքաչափ սահմանել՝

ա/ Մսուր մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 3000 դրամ ամսեկան:
բ/ Երաժշտական դպրոցում յուրաքանչյուր սովորողի համար 2500 դրամ
գ/ Գեղարվեստի դպրոցում սովորողների համար 1000 դրամ
դ/ Կոմունալ տնտեսության կողմից ջրամատակարարման ծառայության դիմաց յուրաքանչյուր ջրօգտագործող տնտեսության համար ամսական 1000 դրամ:
ե/ Ոչ կենցաղային նպատակներով ջրօգտագործող տնտեսությունների մեկ մ^3 ջրօգտագործման համար 100 ՀՀ դրամ
զ/ Ջրօգտագործվող իրավաբանական անձանց և ոչ կենցաղային նպատակներով ջրօգտագործող տնտեսությունների մեկ մ^3 ջրօգտագործման համար 100 ՀՀ դրամ:

14, Գառնի համայնքում կենցաղային աղբի աղբահանության վճարի դրույքաչափ սահմանել

ա) Ըստ հաշվառման անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառումը ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակիչի համար 50 դրամ ամսեկան.
բ)Գառնի համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
Ըստ ծավալի 1մ^3 աղբի տեղափոխման համար 2000դրամ, ըստ զանգվածի 1 տոննա աղբի տեղափոխման համար 5000 դրամ

գ) Կենցաղային աղբի աղբահանության վճարումներից ազատել՝ հայրենական և արցախյան պատերազմի մասնակիցների, փարոս համակարգում ընդգրկվածների ընտանիքներին: